# 87

Հե 251, Էլմ. 746, Հռոմ. 8:35,39
1. Ով տառապանաց աշխարհը,
Ի՜նչ սուր են փուշերդ ինծի,
Ուր էր, որ զիս տաներ մեկը
Այս խոր ձորեն:

2. Ով Իսրայելի տանողը,
Ե՜կ ամպի, կրակի սյունով,
Անվտանգ անցուր մեր անձը
Այս խոր ձորեն:

3. Քաջ Հովիվ Դուն, Տեր Հիսուս իմ,
Բաց Քո սիրոյդ բազուկներ.
Հետս եղիր, զորեղ պաշտպան իմ,
Այս խոր ձորեն:

4. Սուրբ Հոգի, հզոր Աստված մեր,
Թշնամեաց հաղթե ուժովդ,
Մի թողուր զիս՝ դեռ չելած վեր
Այս խոր ձորեն:

5. Ո՜հ, ինչ վիշտ ու ցավ քաշած եմ
Հոս՝ կյանքիս բաժին եղած,
Ընդունե զիս, երբ ելլեմ ես
Այս խոր ձորեն: